խորհրդային կառավարության, և միւս կողմից ընկերներ Դրօն և Տէրտէրեանը ի դիմաց Հայաստանի Հանրապետության կառավարության՝ կնքեցին համաձայնութիւն հետևեալի մասին.

1. Հայաստանը յայտարարւում է անկախ սոցիալիստական խորհրդային հանրապետութիւն:

2. Մինչև Հայաստանի խորհուրդների համագումարի հրաւիրումը կազմւում է ժամանակաւոր Ռազմա-Յեղափոխական Կոմիտէ, որին կանցնի բովանդակ իշխանութիւնը Հայաստանում:

3. Ռուսաստանի խորհրդային կառավարութիւնը ընդունում է, որ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության հողերի մէջ անվիճելի կերպով մտնում են՝ Երևանի նահանգը իր բոլոր գաւառներով, Կարսի նահանգի մի մասը, որը գինուորական տեսակէտից կապահովէ երկաթուղու տիրապետութիւնը՝ Ջաջուռ-կայարանից Արաքս-կայարանը, Գանձակի նահանգի Զանգեզուր գաւառը և Ղազախի գաւառի մի մասը օգոստոս 10-ի համաձայնութեան սահմաններում, և Թիֆլիսի նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի տիրապետութեան տակ էին գտնւում մինչև 1920թ. սեպտ. 28:

4. Հայկական բանակի հրամանատարական կազմը չի ենթարկւում պատասխանատուութեան այն գործերի համար, որ կատարել է բանակի շարքերում մինչև Հայաստանում խորհրդային իշխանութեան յայտարարումը:

5. Դաշնակցութեան և ուրիշ սոցիալիստական կուսակցութիւնների (Ս.-Յ., Ս.-Դ.) անդամները ո՛չ մի հալածանքի չպիտի ենթարկւեն կուսակցութեան պատկանելու և կոմունիստական կուսակցութեան դէմ մղւած կռիւներում մասնակցելու ու Խորհրդային Հայաստանի յայտարարութիւնից առաջ կատարած գործերի համար:

6. Ռազմա-Յեղափոխական Կոմիտէի մէջ մտնում են հինգ անդամներ կոմունիստական կուսակցութեան կողմից նշանակւած և երկու անդամ ձախ-դաշնակցականների խմբակից՝ համաձայնելով կոմունիստական կուսակցութեան հետ:

7. Ռուսաստանի խորհրդային կառավարութիւնը միջոցներ է ձեռք առնում անմիջապէս կենտրոնացնելու Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան պաշտպանութեան համար անհրաժեշտ գինուորական ուժեր:

8. Սոյն համաձայնագիրը ստորագրելուց յետոյ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը քաշւում է իշխանութիւնից: Իշխանութիւնը ժամանակաւոր կերպով, մինչև Յեղափոխական Կոմիտէի դալը, անցնում է զօրահրամանատարութեան, որի գլուխն է կանգնում Դրօն: Ռ.Ս.Ֆ.Ս.Հ. կողմից Հայաստանի զօրահրամանատարութեան կից կոմիսար է նշանակւում ընկ. Միլինը:

Պատրաստւած է երկու օրինակ:

Ռ.Ս.Ֆ.Ս.Հ. լիազօր ներկայացուցիչ՝ Լեգրան

Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան լիազորութեամբ՝ Դրօ, Տէրտէրեան:

Նոյն դեկտ. 2-ին, գիշերը, Ալեքսանդրապոլում, ստորագրւեց հայ-թիւրքական հաշտութեան դաշնագիրը: